# Արձանագրություն N 3

## «ԵԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/5» *ծածկագրով* գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի ամփոփման նիստի

Պատվիրատուի անվանումը ՝ Երևանի << Արաբկիր>> ԱԿ ՓԲԸ    հայտերի ամփոփման նիստի օր՝ 20.02.2026թ.

Գտնվելու վայրը ՝ ք. Երևան, Հր. Քոչար 21    հայտերի ամփոփման նիստի ժամ՝ 11:00

Մասնակցում էին՝ **Հանձնաժողովի նախագահ**՝ Ի. Քեխյան

**Հանձնաժողովի անդամներ**՝ Մ. Կարապետյան, Լ. Գլջյան

**Հանձնաժողովի քարտուղար**՝ Հ. Գևորգյան

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգ>> - ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված:*

<u>Օրակարգ</u>

<u>Ընթացակարգի հայտերի ամփոփման մասին</u>

*Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Քեխյան*

1. *Առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցների հետ բանակցությունների վարման վերաբերյալ.*

1.1 Գնային առաջարկի նվազեցում չի եղել.

2. *Մերժված հայտերի և գնման պահանջի վերացման, չկայացած չափաբաժինների մասին.*

2. 1 Հանձնաժողովի կողմից մերժված հայտեր չեն եղել,

2. 2 Հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 40-րդ հոդվածի 5-րդ ենթակետի է. պարբերությամբ և "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ պարբերությունը գնահատող հանձնաժողովի անդամները միաձայն որոշեցին գնման ընթացակարգի «1-23, 26, 29-42» չափաբաժինները համարել չկայացած:

3. *Գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակիցների մասին՝*

3.1 Գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր ներկայացրած Մասնակիցների գնային առաջարկները և հանձնաժողովը որոշեց ՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և տեխնիկական բնութագրին համապատասխանող, ինչպես նաև հիմք ընդունելով նաև ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 13. 10. 2022թ. N 1593-Ն որոշման 40-րդ կետի 6-րդ ենթակետը հաղթող ճանաչել հետևյալ Մասնակիցներին՝

- ԱԷՄՁԻ ՍՊԸ – 24,25,27,28

3.2 << Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն է սահմանվում անգործության ժամկետը,

3.3 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկը ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ ---------------------------------------- Ի. Քեխյան

Անդամներ ---------------------------------------- Մ. Կարապետյան

---------------------------------------- Լ.Գլջյան

Քարտուղար ---------------------------------------- Հ. Գևորգյան